

ՀԱՆԴԻՍ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ Ի ՎԵՐԱՅ ՎԻՐԳԻԼԻՈՍԻ

Պատեհ համարելով առաջիկայ տարւոյս սկիզբը առ 'ի մէջ հրատարակեալ Վիրգիլեայ Ենէականն նոր թարգմանութիւնն 'ի չափս հայկականս, որ գրականական վերջնութեւր աշխատութիւնն եղած է մեր հանգուցեալ քաջ հայկաբան և ճարտար սաղաշափ Գեորգ Զ. Եգուարդայ Հիւրմուշ, կը գնենք հոս գաղղիացի քաջ քննադատ մատենագրին Սէնդ-Պէովի' Վիրգիլիոսի վրայ ըրած գասախօսութեանց զխաւոր մասունքը, առ 'ի Ժանթադոյն ևս և աւելի սիրելի ընելու համար համագոցեայ Վիրգիլեայ հանձարոյն գերազանցութիւնն ու հրաշալիքը:

Վիրգիլիոս իր կենդանութեան ժամանակէն սկսեալ՝ բովանդակ լատին ցեղին բանաստեղծն եղած է ինքն եղաւ որ ճաշակի, կրից և պգացմանց նոր ձև մը տուաւ, և գուշակեց շատ առաջ ինչ որ պիտի սիրէին ապագայք: Շատ տարանջատեց զարդիս և նախ զՀոմարմայ, յեցիս 'ի հնոյն և 'ի դիւցայինն Հոմարոսէ, որովհետև իրաց մէջ անհրաժեշտ հարկ կայ և օրէնք յաջորդութեան և վերանորոգութեան. վասն զի անկարելի է մի և նոյն դիւրութեամբ ժամանակին և գետոց ընթացքէն վեր ելլելն, որք շատ զանազան ծագումն ունին. վասն զի բիւրակնեանն իդա շատ հեռի է, և իթակէ շատ փոքր, վասն զի Հոմարմ' Հոմարմ' է, և անտի ծագած բոլոր ժողովուրդներն, նորա պէս ներկայ կը դիտեն իրենց հորիզոնն, և մինչև երակաց մէջ լատին արեան հետք մը կը պահեն դեռ: Վիրգիլիոս նապիտոլիոնի բանաստեղծն եղած է: Սաստիկ ապականեալ և թանձրամած դարուց մէջն ևս, երև-

ցաւ նա իբրև զօրաւոր և գիւթական անձնաւորութիւն մը անձկայի և ոչ իսպառ անհետացեալ զմայլման, և միշտ նոյն զարմանահրաշ Վիրգիլիոսն եղաւ: Երբ բարբարոսութեան ձմեռն անցաւ, նորանոր լուսաւորութեանց գահազուլս եղաւ: Խորին փափկութեան, քաղցր և աղնուական լիզուի գերածայրեալ դասեր տալն յետոյ, հանճարեղ մտաց առաջին արձագանքներն արթնցուց, և բացաւ գեղեցիկ խօսից լայն գետը: Իրեն տոհմակից չեղողքն իսկ օգտուեցան իրմէ, որդի ճանչցան զիրենք և Քվիրգիլ իրենց հայր կոչեցին: Որչափ աւելի քաղցրանալ սկսան բարձրագոյն ընկերութեանց, և չափաւորապէս կրթութիւնն տարածուցաւ, գտաւ վերստին իրեն լուսափայլ կլիմայն. հետ զհետէ աւելի ևս սկսաւ հասկըցուիլ առաւելագոյն կերպով զարմանալի ըլլալ իր լուսաւոր պարզութեամբ և իմաստուն շարակարգութեանց նրբաբանութեամբը: Աւելի զինքը սիրելի ըրին կրից նկարագրութիւններն, զգայուն զուրցուածքն և փափկութիւնն: Հիմակուան ժամանակս Վիրգիլիոսէն և Որատիոսէն անկարելի է այլ ևս բաժնուիլ, և իբրև թերափք միատեղ կը տարուին, երբ հարկ ըլլայ բացարձակապէս լատին քաղքին մնացորդք և զհին հայրենիս թողուլ բաժնուիլ: Որատիոս բարեկամ է, Վիրգիլիոս վարժապետ և բարեկամ միանգամայն:

վիրդիլիոս, որ ծնաւ Մանդուպի մօտ գիւղաքաղաքի մը մէջ, հոկտեմբերի 15ին Հռովմայ հիմնարկութենէն 684 տարի վերջը (այս տարեթիւը ճշգրտութեամբ առ յետինս անցած է, վասն զի շատ վիրդիլիոսաւէրք հաւատարմութեամբ իւր ծննդեան տարեդարձը կը կատարէին) . ինչպէս կ'ըսուի աղքատ ծնողաց զաւակ էր, բայց երկրագործութեամբ շատ առաջ եկած էին և համեստ չափաւորութեամբ կ'ապրէին . անթերի դաստիարակութիւն մ'ընդունեցաւ, ընելով իր ուսումը նախ մօտակայ Գրեմոնս և Միլան քաղաքաց մէջ . և յետոյ, եթէ Աթէնք չգնաց Ռատրիոսի նման, ըմպելու այն ականակիտ յրերն և պարարելու Ատտիկոյ նուրբ և թափանցիկ օդով, « հօն ուր կը պատմուի, թէ ժամանակաւ (ըստ Եւրիպիդէսի) Պիերիդեան ինն պարկեշտաւոր Մուսայք ծնան զխարտեաչ Դաշնակութիւնն, կարող եղաւ երթալ 'ի Նէպոլիս, որ իտալիոյ Յունաստանն կը համարուէր, և մեր բանաստեղծին համար իբրեւ երկրորդ հայրենիք մ'եղաւ : Այս անգլոյս մէջ, յառաջ կամ յետոյ, իր ուսումը շարունակեց Փարգենիոսի Նիկիացոյն առաջնորդութեամբն, որ յոյն էր ազգաւ, հեղինակ առակաց հաւաքման մը և բանաստեղծ կամ տաղաչափ : Կ'ըսեն թէ շատ անգամ ընթերցաւ զժողովրդիտիզէս, և շատ բազմաթիւ գրեանք : Միտոն անունով եպիկուրեան փիլիսոփայի խնամոց տակ, շատ հմտացաւ եպիկուրոսի դրութեան : Ուսաւ զչափաբերութիւն զբժշկութիւն, և ինչ որ կարելի էր սովորիլ : Այս է նախնեաց ունեցած գաղափարն վիրդիլիոսի վրայ, որ նորա բանաստեղծութեանց մէջ իբրեւ գիտուն և զննող անձի մը ճշգրտութիւն և անզուգական հաւատարմութիւն կը զբտնէին, այնչափ որ Մակրոբիոս ուղեւով Մշակականի աստիղադիտութեան կը տոր մը բացատրել կը յաւելու... « վիրդիլիոս, որ ամենեւին ուսումնական նիւթոց մէջ չսխալիր » :

Իսկզբան երկտողք, վերաառութիւնք

և փոքրիկ բանաստեղծութիւններ շարադրեց . յորոց կարծուի թէ գոնուին ոմանք : Այս առաջին բանաստեղծական գրութեանց միոյն մէջ անսկիւր լուծան, և ուրիշ հատուածի մը մէջ որ վիրդիլիոսի կը տրուին, երբ հովիւ մը կը ներկայացուի որ իր հօտն յարօտ կ'առաջնորդէ, այն հովուական կենաց քաղցրութեան նկարը որ կը տեսնուի, ստուերագիր մ'է իր վերջէն 'ի գովեստ հողագործաց գրածին Մշակականաց . « Երանի այն հովուին որ շատ իսկ ուսման չգրադելով, չէ մոռցած սիրել ըզգաշտս և զգիւղական աղքատութիւնն » :

Բայց Հովնէրգոռքիւնքն վիրդիլիոսի բուն նպատակը կը ցուցնեն : Իսկըզբանէ միտքը զբաւ յունական բանաստեղծութեան քանի մը գեղեցկութիւնքն և շնորհքն հռովմէական գրականութեան և բանաստեղծութեան մէջ մոցնել, որ եւտուլոսէն և Լուկրետիոսէն վերջն իսկ լատին սոցոյն մէջ այն քաղցրութիւնն և մաքրութիւնն գեղեցիկն ստացած, թէոկրիտոսի հետեւողութեամբ սկսաւ : Հայրենիքը դառնալով, հոչակեց անոր գեղեցկութիւնքը և քաղցրութիւնքը . նմանելով իր նկարագրութեանց մէջ, որչափ կարելի էր, սիկիլիացի քերթողին : Այս ժամանակս հանդիպեցաւ Կեսարու մահն, և Լեպիդոսի, Անտոնիոսի և Հոկտավիոսի անոր անաւոր եռապետութիւնն : Մանգուա իր կալուածներովն Անտոնիոսի վիճակեցաւ, կայսրութեան բաժանման ժամանակ և Ալեքիոս Պոյլիոն երեք տարուան ժամանակ գաղղիական Անդրալքեանց վրայ վարիչ դրուեցաւ, որուն կը պատկանէր այս քաղաքս : Նոթեցաւ վիրդիլիոսի, զինքն պատուեց և խնամք ունեցաւ վրան . քերթողին երախտագիտութիւնն իր երգոց մէջ Պոլլիոնի անունը անմահացուց և եղաւ այն գեղեցիկ զաշնակաւոր անունն, ներքն մէկն որ խօսակցութեան մէջ կը գործածուի իբրեւ անբաժանելի գրականութեան ամենէն աւելի ծաղկած դարերէն :

Պոլլիոն և Գալլոս, վիրդիլիոսի հետ

ողջուններ այս անուններն, որ մեզի համար աւելի բանաստեղծական են քան թէ քաղաքական, և ճշդիւ չքըն- նենք թէ ինչ անձինք էին : Գաղաքա- կան պատերազմաց մէջ անձ և զեղ- ծած . փառասմբք, հարստահարողք, շահախնդիրք, անխիղճք, իրենք զիրենք մտածողք և շատ ախտերու տեսարք : Պոլլիոն մինչև վերջն իմաստութեան և մեծ հոգւոյ տէր ըլլալուն ցոյցն տուաւ, և ծերացաւ, Օգոստոսի ժամանակ, ա- զատօրէն, պատուով և ամենամեծ հա- մարմամբ : Գալլոս, որ Պոլլիոնի հետ պատանի վիրգիլիոսին պաշտպանու- թիւն ըլաւ, շատ առաջ լմնցուց իր ըն- թացքն՝ թշուառութեամբ և անձնասն- պանութեամբ . սա ևս կ'երեկ թէ, ինչ- պէս Ֆուրէ 'ի սկզբն Լուգովիկոսի Գի՞ . թագաւորութեան, չկրցաւ զգուշանալ յաջողութեան պատրուոյ հրապուրանք- ներէն : Եւ թուի թէ իրեն յետկա- զրոյմ առած էր . Ռ'ըր պիտի չ'աւանդիմ : Գլուխն պտուտքեցաւ և գահավիժե- ցաւ : Բայց այս անձինքն կը սիրէին զսրամտութիւն և զհանճար, թերեւ ի- րենք ալ զնոյնն ունէին, և որչափ ալ անձնածօթ մնացած է, սակայն կ'են- թագործմ թէ Պոլլիոն ողբերգութիւն- ներ, և Գալլոս կատակերգութիւններ շարագրած ըլլան . վիրգիլիոսի գովեստ- ներէն և տաղից մէջ ըրած յիշատակու- թիւններէն կը հետեցունեմ ըսածս : Այս առաջին խնամակալուաց անուն- ներն և վարոսինն՝ կը չքեղացունեն քերթողին հովուերգական փորձն, և հռովմէական կնիք մը կը դնեն անոնց վրայ, և երբեք երբեք կը ծանուցանեն թէ պատշաճ է որ անտառներն թղել- խի մը արժանաւոր ըլլան : Եւ դար- ձեալ կ'իմացնեն մեզի թէ ինչ դժուա- րին փորձերէ անցաւ նորա պատանե- կութիւնն, որ շատ անգամ պաշտպա- նութեան կարօտ եղաւ : Հոկտաւիանոս յետ փրկիպպեան յաղթութեան ընդ- դէմ Բիւռատոսի և Կասսիոսի՝ Հռովմէ- րադառնալով, թողուց կերպով մը զբո- վանդակ խալիւա 'ի բաժին և յաւար իր հինաւորաց զօրաց : Այս յանկարծակի

և բռնաւոր բաժանման ժամանակ, որ նոյնպէս հասաւ ըմբռնեց Տիրուլոս և Պրոպերս բանաստեղծներն իրենց ժա- ռանգութեան մէջ, վիրգիլիոս կորսըն- ցուց իր հայրենի կալուածքը : Առաջին հովուերգութիւնն, որ ըստ ժամանա- կագրական կարգի երրորդն է, կը պատ- մէ թէ ինչպէս Տիրտրոս, որ ինքն վիր- գիլիոս է, 'ի մանկութենէ հարկադրե- ցաւ երթալ 'ի մեծ քաղաքն 'ի Հռովմ', ինչպէս ներկայացաւ, հաւանօրէն Մե- կենասի միջամտութեամբ՝ Օգոստոսի, զոր ինքն աստուած կ'անուանէ, և դարձեալ ստացաւ իր ժառանգութիւ- նը, և հռչակեց երախտագիտութեամբ իր երջանկութիւնը, որ շատ ցանկալի եղած էր ընդհանուր խռովութեանց պատճառաւ : Բայց այս երջանկութիւնս անարգել և խաղաղ չեղաւ : Իններորդ հովուերգութիւնն, որ երեկ թէ առա- ջինէն սակաւ ինչ յետոյ յօրինած ըլ- լայ, կը ճշգրտէ ըսածնիս . յայտմ վիր- գիլիոս Մենայկասի անունն առած է . Լիկիդաս մին 'ի հովուաց կ'ըսէ .

« Ըստուգիւ ապաքէն լըւեալ էր իմ, զի ուստի
ըլուրք
Ջիշանէ Ըսկըսանին, և 'ի գիւրին 'ի գարնանդ .
Ըզջօնուն խոնարհէ, անտի մինչև ցալիս Ըբրոյն
Եւ մինչև ջըհնաւորաց փիշուոյն գագաթըն վա-
զաբեկ
Մենայկասն այն ձեր պահեալ իցէ սաղիւք զանգս
անկորուստ » :

Եւ միւս հովին կը պատասխանէ .

« Ի զբոյց համբաւոյն լըւեալ արգեօք իցէ քո
զայն .
Բայց այնքան տաղք մեր 'ի մէջ արիսական զե-
նուց զօրէն .
Որչափ ընդգէմ արծուոյ ընդ օդս ըսպառնալից
խոյսցեալ
Քաւտիկ աղանեաց, ով Լիկիդաս, զօրեւ տան
վէպք » :

Յետոյ կը յաւելու թէ քիչ մնաց որ Մե- նայկաս, այն սիրելի երգեցողն դաշ- տաց իր կեանքը պիտի կորանցընէր : Իս- կոյն Լիկիդաս կը գոչէ .

« Ո՞ր դաւաճեմ հարստուն երգեր յայնժամ, զ
ծաղիւստ
Գալարի սրժոճէր, Երեկիր, կամ հովանի սաղար-
թագեղ
Աձեր զագերբք... »

Մենայկասի այս վտանգը, հաւանօրէն կ'աւանդուէր աւարաւու հարիւրապետին դէպքն՝ որ չէր ուզեր յափշտակած երկրիւր վիրգիլիոսի դարձնել, և սուր 'ի ձեռին' ստիպեց զքերթողն ծածկապէս խոյս տալ 'ի հետամտն և լողալով անցնել Մինկիոս գետէն : Ուստի նոր և զօրաւոր պաշտպանութիւն մը պէտք էր, ինչպէս վարոսին, որպէս զի քերթողն ապահովի վրէժխնդրութենէ, և հետամուտն արգիլուի մինչև որ Հոկտաւիանոսի բարերարութիւնն կատարուի, հաւանական է թէ յաղորդ տալին և յետ Պերուզեան պատերազմին, Հոկտաւիանոսի իշխանութիւնն ընդարձակելով, վիրգիլիոս կատարելապէս վերստին ստացաւ իր սիրելի բնակութիւնն և ժառանգութիւնն :

Երբ ուշադրութեամբ ընթեռնումք իւր միւս հովուերգութիւնները, իւր կենաց յեղաշրջութիւնք մեզի յայտնի կ'ըլլան և ստուգապէս կ'իմանամք իր հոգւոյն այս տարիներու մէջ ունեցած զգացմունքն և առանց իսկ մանրամասն քննելու՝ ինքնին կը ներկայանան մեզի : Գորովալիւր հոգի մը, որ զուսուռն կը սիրէ և քաղցր և խաղաղ գիւղական կեանքը, հարեալ Սիկիլիոյ արտօրէից և հովուերգակ մուսային, քաղցրաբարոյ և համեստ հոգի մը ծնեալ և սնեալ շինական չափաւորութեան մը մէջ, որ ամենայն բան աւելի զգալի և աւելի սիրելի կ'ընէ, և մէկ օրուան մէջ զրկուիլ այս ամեն բանէն, այս ամեն ստացուածէն և այս խաղաղութենէն, յաղթող զինուորաց վայրենաբարոյութիւն պատճառաւ . և հարիւրապետին մերկ սուրէն փախչելով միայն կարենալ ազատիլ որպիսի պտուղը քաղաքական պատերազմաց . ասոնք վիրգիլիոսի վրայ յարատև խորին տպաւորութիւն մը ներգործեցին : Կրնայ ըսուիլ թէ այս դէպքէն կը սկսին իր քաղաքագիտութիւնն, իր հասարակային և ընկերական բարոյականն, և արքայութիւնն մը, ոչ վեր 'ի վերոյ այլ բնական և զրական, և բնաւ չմոռցաւ զայն : Խանդակաթ ջաւոց հառաչը, զոր արձակեց

այն ժամանակն, իր Մելիբէոս հովիւին բերանը դրած է, և այն հառաչքն զեռ դարերէ վերջն մեր սրբաբոլոս մէջ կը հնչէ .

« Այ՛ իսկ յետ երկայն ամաց լեցի զսահմանս ինձ հայրենիս .

Եւ ոչ քաղաքստին հիւղիս զբժբէթ սիդակուտակ Յետ հընձոց ինչ տեսանել, զիմ պետութիւնս, և զարմանալ :

Ձանդաստաննս զայսոսիկ ըզմըշակեալս 'ի մէնջ այսպէս

Զօրականը ժառտ կաքի, խո՛ւժ ըն զորայքս զայսոսիկ :

Ահա ուր հերձուած ըզհէք քաղաքացիս զտառ ծեցոց :

Ահա զյց մամնց 'ի հունձքս զարտորայս սերմանեցաք » :

Վիրգիլիոսի ներքին և բարոյական կենսադրութիւնն այս տողերուս և զգացմանց մէջ պարունակուած են :

Ամեն քերթողներէն աւելի, վիրգիլիոս զգաց քաղաքական պատերազմաց աղէտքն և խորշումն, ընդհանրապէս ըսելով, ամեն պատերազմաց, տարաձայնութեանց և կատաղի կռուոց դէմ : Եթէ Մելիբէոս և եթէ Ենէասն խօսի, մի և նոյն բանն է ըսածնին, մի և նոյն ցաւազին պատմութիւնն է զոր կը նշկարադրեն .

« Ինձ զանպատուամբն նորոգել, գըշխոյ, ըզմըտոս հրամայես .

• • • • • որոց ես ինքն ականատես եղէ վտաց, որոց եղէ և մասնն ոչ ինչ գուղնաքեայ » :

Այսպէս կը խօսի Ենէաս առ Դիդէ յետ օթենամեայ արկածից, և այնպիսի վառվռուն և սրտառու զգացմամբ, իբրև թէ առաջին օրն ըլլար : Ահա վիրգիլիոս, և իր երևակայութիւնն վառող աղբիւրներէն մէկն :

Կարծեմ թէ ճշմարտութենէն չեմ հեռանար, եթէ պնդելու ըլլամ վիրգիլիոսի չափաւոր ստացուածք և գիւղական վիճակ ունենալուն վրայ, յորում ծնաւ նա, չափաւորութիւն մը, որ՝ ինչպէս ըսի, ամենայն ինչ առելի զգալի և առելի սիրելի կ'ընէ, վասն զի

միշտ վտանգի մէջ է, վասն զի միշտ աչքին առջևն է այն վայրկեանն յորում ստացաւ, և այն յորում կարելի է կոր. սրնցընել. այսու չեմ ուզեր ըսել թէ մե. ծամեծներն և մեծատունք խնամք չու. նին իրենց ընդարձակ կալուածոց, ան. տառներուն, որսոց, բուրաստաննե. րուն և դղեակներուն վրայ. բայց ինչ ալ ըլլայ, նոյնպիսի գոգուանօք չեն հո. դար, ինչպէս աղքատն կամ չափաւոր ցանկապատ կալուած մը ունեցողն, որ իւր քրտամբ բանած է, և հաշիւ կը բռնէ իր որթերուն, և խնձորենիներուն. որ գրեթէ ամեն տարուան հնձոց ժամա. նակ կը կանխէ ու կը հաշունէ իր խըն. ձորներն և դեռ ազոյն ողկողներն, և մինչև իր մեղուաց թիւն ևս գիտէ : Հապա ինչ պիտի ըլլայ՝ եթէ այս կա. լուածատէրն և տանտէրն միանգամայն երեակայող, քերթող և սիրահար մ'է. եթէ իր սիրտն և մտածութիւնքն և ման. կութեան յիշատակներն ամէն մէկ կա. ղամախեաց հետ կապեր է, և մինչև հովանեաց խակ ներքև : Վիրգիլիոսի փոքրիկ ագարակն՝ (որ թերեւ շատ փոքր չէր) որ կ'երկըննար բլրոց և ծմա. կաց մէջ, իր հովանիներովն և ջրերով, իր ջրակուտակներովն և կարապներով, իր մեղուններն ուռնեխով չըլապատեալ փրկակներովն, այս վիճակիս մէջ տես. նելով, մենք ևս կը սիրենք իրեն պէս . մենք ևս կը գոչենք իրեն հետ, նմանա. պէս այրած սրտով, երբոր ինքը զայն կորսնցընելու վտանգին մէջն էր . խուժն գորայքս զայնուսիկ ...

Կարծեմ անկարելի չէ Մինկիոսի ափանց վրայ ճանապարհորդելու ժա. մանակ՝ գուշակել հաւանօրէն, (ինչպէս գուշակուեցան Որատիոսի ամառաս. տունքն) և որոշել մերձաւորապէս այն տեղն ուր կը բնակէր Վիրգիլիոս : Այս տեղէն մեկնելով՝ Մանդուա երթալու համար, երբ այն տեղը կու գայ ուր Մինկիոս միապաղաղ լիճ մը կը ձեա. ցունէ, ճամբուն կէսն էր. և զայն մեզի կը ծանուցանէ լիկիզաս իններորդ հո. վուերգութեան մէջ, որ առ Մերիս դառ. նալով՝ երգելու կը հրաւիրէ .

ԳՐԱԿ Բ .

« Ահա ալիք քեզ ծայր 'ի ծայր լըռեն այժմիկ քաղցրածաւալ .
Տես, զիարդ հողմակոծեալ օդոցն խաղառ անկան մըսուշէք .
Ահա 'ի կէս ուղւոյս հասեալ կամք, և շիրիժ Բիանորի
Գայ աւասիկ աստ յերևան » ...

Արդ ճշգրիտ չափն ունենալու համար, պէտք է գիտնալ, թէ ո՞ր գտնուէր Բիանորի գերեզմանն : Անգղիացի ճիշդ և մտացի գրողի մը երկասիրութեան մէջ գտայ Վիրգիլիոսի կալուածոց ստո. բազրութիւնն, զոր ուրախութեամբ թարգմանեցի, վասն զի ինձի կ'երևի թէ մեծ խնամքով և ճշմարտախօսու. թեամբ երկասիրած ըլլայ :

« Վիրգիլիոսի կալուածն և ստա. ցուածքն էին, կ'ըսէ մեզի Տիննլոյ (Dunlop) ¹, Մինկիոսի ափանց վրայ : Այս գետս որուն ջրոց գոյնն խոր ծո. վու կանաչութեան երեկոյթն ունի, Բե. նակայ կամ կարտայ լճէն կը ծագի . անտի ելլելով կը վազէ փոքրիկ և ցը. րուած բլուրներու մէջէն որք այգիներ. րով ծածկուած են . յետոյ անցնելով ա. ռասպելական դղեկէն որ փոքրիկ բար. ձրութեան մը վրայ շինուած է, և հի. մայ վալէճիոյ կ'ըսուի, երկայն հովտի մը մէջ կ'իջնայ, և դաշտագետնոյն մէջ տարածուելով երկու փոքրիկ լճեր կը ձևացընէ, մէկը Մանդուայէն վեր և միւսն անմիջապէս քաղքէն վար : Անտի Մինկիոս կը շարունակէ իր ընթացքը տափարակ բայց արգաւանդ երկրի մը մէջէն երկու մղոնի չափ, մինչև որ կ'եր. թայ կոպեռնոլլի մօտ Բոյ գետը կը թա. փի : Քերթողին կալուածն Մինկիոսի ալ ափանց վրայ կը գտնուէր, գէպ 'ի արևմտեան կողմն, զրեթէ երեք մղոն հեռաւորութեամբ Մանդուայէն վար, Անդէս կամ Բիէդոլա գեղին մօտ : Այս կալուածս հարաւային արևմտեան կող. մէն ընդ մէջ քանի մը բարձրութեանց և գետակին եզերաց՝ տափարակ երկիր մ'էր, և իր մէջն ունէր այգի, պարտէզ և մեղուանոց և խոտաւէտ դաշտեր, ո. րոց մէջ կալուածատեալք աստուածոց

¹ Պատմութիւն Հռովմէական գրականու. թեան :

ուղաններուն համար որովհետեւ կը սնուցանէին : Գետոյն վազուածքն, ուր տեղ որ վիրգիլիոսի կալուածոց կը հանդիպի, լայն է, յամբոյն թաց և մանուածապատ : Իր ճախճախուտ եզերքն եղէգնեցող ժածկուած են, և բազմաթիւ կարապետներ կը լիւզան ալեաց երեսը կամ կը ճարակին ջրաթափախ և սիւղաւետ ափանց վրայ :

« Միով բանիւ, վիրգիլիոսի կալուածին գաշտաւայրն քաղցրութիւն մ'ունի, այլ անկենդան և անփոփոխ քաղցրութիւն, ոչ զարմանալի, և ոչ այնչափ յարմար բարձր մտածութիւններ յուզելու կամ կենդանի պատկերներ արթնցնելու մտաց մէջ. բայց քերթողն 'ի մանկութենէ իր կիսանքը վեւեմփի մեծահարաջ տեսարանաց մէջ անցուց, և այն ատեն, եթէ իր կալուածէն քիչ մը հեռանալու ըլլար, մէկ կողմանէ կրնար տեսնել, գետերու թաղաւորին երկրանոսի կամ Բոյի սրբութաց և չեղատեսիլ մեծատարած վազուածքն, և միւս կողմանէ Բենակայ լիճն, որ երբեմն ալեկոծ Ովկիանու գաղափարը կու տայ :

« Վիրգիլիոսի կեցած տեղն ցած և խոնաւ է և կլիմայն տարւոյն քանի մը եղանակներուն մէջ ցուրտ : Տկար կաղմութեան և լանջաց ցաւերուն պատճառաւ, ստիպուեցաւ, 714 կամ 715 տարւոյն ժամանակներն գրեթէ երեսուն տարեկան հասակին մէջ, աւելի տաք երկինք մը վնասուեալ » . . .

Բայց այս բանս տարակուսական է : — Ամբէր քննադատից մէջ ամենէն աւելի ճանապարհորդողն, ինչպէս իրեն յատուկ է, այս մի և նոյն տեղերուս նկարագիրն և բարոյական տեղադրութիւնը ճիշդ կերպով մը կը բացատրէ իր Տաւոյնական Ողիկորոշքան մէջ :

« Ամենայն ինչ 'ի Մանգուա վիրգիլիոսական է, կ'ըսէ. կայ անդ վիրգիլեան տեղագրութիւն և վիրգիլիոսի հրապարակն. ցանկալի տեղ, որ Նաբուլէոնի հրամանալի Օգոստոսի արքունեաց քերթողին նուիրուեցաւ :

« Տանդ է եղականացուցեր է զՄիւն.

կիտս, իւր սովորութեան համեմատ սեղմ և կորովի բացատրութեամբ .

« Ընընտադոյն գլուխն վայրընթացն իսկոյն Ուր ճապալէ լըճացուցեալ զայն 'ի յեղափուր » :
Դժ-Ի-Ե. Երգ. Ի.

Բայց յայսմ չկայ վիրգիլիոսի շնորհաբանութիւնն .

.... ուր Միւնիոս մուրի մեծն 'ի յամր ոլորս Եւ յամուրս առոյգ շաթից ըզգեստեգրս պա-
րածածկէ » :

Մալ-Ի-Ե. Երգ. Գ.

Փորենտիոյ քերթողին զիւրիմաց և քիչ մը ցամաք սղութիւն, բաղդատելով վիրգիլիոսի վսեմ շոպլարանութեան հետ, կը տեսնուի երկու ճարտարներուն ոճոյն տարբերութիւնն մի և նոյն նիւթը նկարագրելուն մէջ :

« Այսու հանդերձ լճացուցեալ բառն Մանգուայի շրջակայից որոշ գաղափարը կու տայ : Քաղքիս մոտենալու ժամանակ, թուի թէ իրաւընէ ուրիշ կլիմայի մը մէջ կը մտնես . ճախճախուտ դաշտերէն անընդհատ գոլորշիք կը բարձրանան և շատ անգամ շատ թանձր են. այնպէս որ առաջին տեսութեամբ կըրնայ համարուիլ թէ Հոլանտա ըլլայ » .

« Բնութեան բոլոր տեսարանն կը փոխուի . այգեստաններու տեղ արօտներ կը տեսնուին, վիրգիլեան արօտներ, խոտաւեռ մարգարտիններ : Լաւագոյն կերպով կը հասկըցուի վիրգիլիոսի սրտին թախծութիւնն մառախլապատ և մեղմ մթնոլորտիս և միօրինակ դաշտիս մէջ, և ստէպ ստէպ քօղարկեալ արեգական ներքն » :

Ջանամ նշանակել զանազանութիւնը, բայց առանց երկնցընելու և աւելի մեծցնելու. վիրգիլիոսի նկարագրածէն աւելի բան մը չեմ ուզեր ըսել. վստի վիրգիլիոս ինքն միայն կրնայ ըլլալ իր կալուածոց նկարագրողն և պատկերահասն. և 'ի նախընթաց նկարագրութեանց՝ առաջնոյն մէջն (անգղիացի մատենագիրն նկարագրութիւնը կ'ուզեմ ըսել) կը տեսնուի որ վիր-

գիլիստի յետադայ տողից նկարագրու-
թեան արձակ գրութիւնն է .

« Ծերունիք բարեբաստիկ , գու աստ 'ի մէջ ծա-
նօթ գետոց :

Դու 'ի մէջ սուրբ աղբիւրաց վայելէսցես զով
հովանի .

Աստի ցանկ սահմանակից , ուրանոր շուրջ ճարա-
կաւոր

ի ծաղկունս ուռեռտանին պարեն յաւերժ հի-
բէան մեղուք » . . .

Այսպէս վիրգիլիոսի շատ խորթելի
է գալարազարդ և անփոփոխ երկրի մը
գեղեցկութիւնն , փեթակներու մէջ մե-
ղուաց բզզանքն , հեռուէն լսուած երգ
մը , զսա 'ի վայրի վրայ եղած յօտոցի
ձայնն , և մօտակայ վայրի աղանձեաց
կամ տատրակաց մնչն . կը սիրէ այս
լուռ և հանգարտ կենցաղավարութիւն ,
այս միակերպութիւնս , որ կէս մը թախ-
ծութիւն և անուրջ կը պատճառէ :

Բայց երբ հասնի յետոյ իր բովանդակ
ոճոյն մեծութեանն , մեծամեծ տեսա-
րաններ նկարագրելուն մէջն ևս պիտի
գերազանցէ :

Եննդեան հայրենիքը թողլէն քիչ
ետըր 'ի Պրինտիզի կը ճանապարհորդէ
715 կամ 717 տարեաց միջոց , ինչպէս
կը պատմէ Որատիոս : Ի ճանապարհի
կը գտնէ զՄեկենաս և զՈրատիոս , իսկ
ինքն ընկերակից զՊլոտիոս և զՎարոս
ունի , և քաղցրախօս պատմաբանն կը
կոչէ զԵրեսին (բայց մեզ ցանկալի է
այս գովեստս յատկապէս առ Նոյն ինքն
վիրգիլիոս վերաբերել) գերազանց և
անկեղծ հոգիներ որ երեցած են երկրիս
վրայ , և զորս գործմանք կը սիրէր :

Եթէ Պոլլիոն , ինչպէս կարծուի , յոր-
դորեց վիրգիլիոս գրել իր Հովմեւր-
գութիւններն , զորս շարադրելու և ուղ-
ղագրելու համար երեք տարի աշխա-
տեցաւ , բայց Մեկենաս եղաւ որ ա-
ռաջարկեց հռովմէական , հայրենասի-
րական գլխովին խաղաղական Մշակա-
կանաց նիւթը , որոց վրայ եօթն տարի
անցուց : Այս Մեկենասայ խորհրդա-
տուութեան կամ բարեկամական հրա-
մանին վրայ առ վիրգիլիոս , զոր ինքը

միայն կրնար յանձն առնուլ արժանա-
պէս և աւարտել զգծուար գործն , կիպ-
պըն՝ այն մարդկանց մէկն որ լաւագոյն
կը ճանչնան զհռովմէական իրս , ուշի-
մամիտ և բարձր տեսութիւն մ'ունե-
ցաւ : Ըստ իւր կարծեաց , Մեկենաս
մտածած պիտի ըլլայ , այս մշակական
մեծ բանաստեղծութեամբ , որ բոլորու-
վին Հռովմայեցւոց ճաշակին համեմատ
էր , հին զինուորաց՝ որոց երկիրներ բաշ-
խուած էր (և սովորութիւն եղած էր
այս Սիլլայի ժամանակէն ետըր) կենաց
նոր վիճակին և երկրագործութիւնը
սիրելի ընել տալ : Վասն զի զինուորաց
մեծ մասն , որոց իսկզբան երկիրներ
տրուած էր , մշակած չէին , և եղածն
ղեղխութեամբ վատնած էին : Ուստի
հարկ էր վարժեցընել արտորէից աշ-
խատութեանց , որ այնչափ սիրելի էր
նախնեաց , և անոր հրապուրիչ պատ-
կերները բանալ առջնին :

« Ո՛ր զինուորն , կը գոչէ կիպպըն ,
չէրնկատեր ինքզինքը յանձն Գալէսեան
եզերաց վրայ եղած ծերոյն : Անոնց պէս
'ի մանկութենէ գէ՛րքի վարժած , վեր-
ջապէս իր երջանկութիւնը անմարդի
առանձնութեան մը մէջ կը գտնէր , որ
իր աշխատութեամբք զուարճալից օ-
թեան եղած էր » :

Գիտեմ թէ կիպպընի ըսածն ըստ
իմիք երեակայութիւն է , թէ այս զի-
նուորներն Տարենտոնի ծերոյն գրուագն
կ'ընթեռնուին . այլ գէթ այն զինուոր-
ներուն որդիքն կարող եղան ընթեռ-
նուլ զայն :

Վիրգիլիոս , հրաժեշտ տալով ոչ 'ի
սրտէ իր Մանդուայի երկիրներուն , Օ-
գոստոսի բարերարութեամբք լցուած
յետադայ տարիներն և կենաց մնացած
մասը երբեմն 'ի Հռովմ և աւելի յա-
ճախ 'ի Նէապոլիս և խաղապաւէտ կամ
պանիոյ մէջ անցուց , զՄշակակալնքն
շարադրելու զբաղելով և ապա զԵնեա-
կանն : Փափուկ կազմուածքին պատ-
ճառաւ , իր երկայն աշխատութեանց
համար առանձնութեան կը կարօտէր ,
աշխարհէ կը փախչէր և կը սիրէր զա-
ռանձնութիւն , զմտերմութիւն , զբա-

րեկամութիւն և զգորով, յանձանօթ հանգստեան և 'ի զմայլման, կը ճգնէր անդադար կատարելագործել և լրացրնել իր անմահ գործերը, կանգնելու իր կանայ տաձարը, ինչպէս ինքն այլաբանօրէն ըսած է: Սակաւագիւտ երջանկութիւն. ստուգիւ մեծ առանձնաշնորհութիւն՝ համեմատելով զինքն ընդ այլ ամենայն գիւցաղներգակ բանաստեղծս, որ յաճախ թափառական կենալք մ'ունեցան, դատապարտուեցան կամ աքսորուեցան: Սակայն վիրգիլ գիտէր, և անդադար կը յիշեցնէր անձին, թէ որչափ մարդուս համար թշուառութիւնն յարակից է բարեբախտութեան, և թէ այսօրուան կամ վաղուան աղետիւք աշխարհի հանգստեան միջոցները կը ստացունին: Յետ աւարառութեան և աքսորանաց աղետից, վերստին ստանալով բովանդակապէս զամենայն ուրախութիւնս բնութեան և հայրենի ժառանգութեան, իսպառ չըմոռցաւ թէ կրնար դարձեալ զայն կորսնցընել. նուրբ թափանցիկ քօղ մը մնաց իր աղնիւ և խանդակաթ սրտին վրայ:

Ուրիշ կենսագրական տեղեկութիւն, այսչափ հեռաւոր ժամանակէ ետքը վիրգիլիոսի վրայ չեմ կրնար ընծայել, եթէ ոչ երևակայալիս կենսագրութիւն մը, եթէ կարելի է ըսել այսպէս: Հին գրականք, որոնց քով քերթողիս ստուգապատում կենսագրութիւն կրնա, յինք փնտրուել, շատ անտեղութիւններ և առաւելներ մէջ մտուցած են. սակայն 'ի քանի մը մասանց, որ մեղի հասած են և որ կը համաձայնին իր հոգւոյն բնաւորութեան և տաղանդին խառնուածոյն հետ, առանց բռնազբօսութեան կը տեսնենք, երկչոտ, համեստ և ամթղած վիրգիլիոս մը, աղջրկան չը պէս. փասն զի գիրարւ կը խոռվէր, շուտ կը շփոթէր և ծանր էր միտքը ու սիրտը պարզելու. սիրելի և քաղցրաբարդ երբ մտերմանար. ամենալաւ ընթերցող (իբրեւ զՌասին), մանաւանդ տաղերգութեանց, մեղմացուցմամբք և փոփոխմամբք ձայնին, ճշմարտապէս

զակալիս դիտող երբ այլոց տաղերգութիւնները կ'արտասանէր: Շագոյրիան, Ոգի ֆրիստոնէոքեան գրոց մէկ գլխոյն մէջ, յորում զվիրգիլիոս Ռասինի հետ կը զուգակշռէ, շատ սիրուն խօսած է երկուքին վրայ, և շատ ընտրութեամբ, սակայն անճիշդ պարբերութիւն մը կը գտնեմ, որ գրեթէ կ'եղծանէ, ըստ իս, զգաղափարն, զոր կրնամք ունենալ վիրգիլիոսի անձին վրայ:

« Առաջ ցուցինք, կ'ըսէ Պ. Շագոյրիան, թէ վիրգիլիոսի մաղձառութեան նախնական պատճառներէն մէկն անտարակոյս իր խեղճութեանց մտածութիւնքն եղան, զորոց զփորձն իր պատանեկութեան ժամանակն առաւ: Հալածուելով 'ի հայրենի բնակութեանէն, իր Մանդուայի յիշատակն միշտ մտքին մէջ մնաց. բայց վիրգիլ ընկերհաշտութեան հռովմայեցին չէր, Բրուտոսի պէս յամառ և ժանտ կերպով սիրելով իր երկիրը. Օգոստոսի միապետութեան հռովմայեցին էր, Հոմերոսի նախանձորդն, և Մուսայից աշակերտն:

« Վիրգիլիոս անեցուց այս տրտմութեան առիթը, միայնակ անտառներու մէջ ապրելով: Թերեւս կարելի է աւելցընել առոր վրայ մասնական գիպուածներ: Մեր բարոյական կամ բնական թերութիւնքը շատ կ'ազդեն մեր բնաւորութեան վրայ, և են յաճախ պատճառ այն մասնաւոր ոճոյն զոր կ'առնուն մեր բարոյքն, վիրգիլիոս տաղանդութեան դժուարութիւնն ունէր, տկար մարմնով՝ յինական տեսքով: Երեւ թէ պատանեկութեան ատեն վառվռուն յօժարութիւններ ունեցած ըլլայ, յորոց այս բնական անկատարութիւնքն արգելած ըլլան զինքն: Ուստի ընտանեկան վշտերն, ախորժ արևորէից, անձնասիրութիւն մը նեղութեանց մէջ, և անկատար յօժարութիւնք ներդրածեցին 'ի նա այն յափշտակութիւնն որ զմեզ կը զմայլեցընէ իր գրուածոց մէջ»:

1 Առաջին տպագրութեան մէջ մատենագիրն աւելցուցած էր « անպէղծայ կերպարանք: »

Բայց անձնատիրութիւն մը ներդառնալով և անկատար յօժարութիւնը ինծի շատ յանդուգն ենթադրութիւն կ'երևին . խօսիմք միայն նկատմամբ վիրգիլիոսի փափուկ և զգալուն սրտին և իր պատանեկութեան թշուառութեանց : Իսկ ընդ հակառակն առողջ անուրիքն ու զօրաւորն ոչ միայն չէր կրեր այլ և գեղեցիկ և զարմանալի առողջարանութիւն մը ունէր : Շագուորի միջոցով անոր պատճառն է , որ ուրիշ նկատմամբ գերազանց գովեստիք խօսած է վիրգիլիոսի վրայ , վասն զի Դոնատիոսի գրած վիրգիլիոսի կենսագրութեան մէջ , տեղ մը ըստւած է թէ շատ ծանրախոս էր , բայց այս կը նշանակէ թէ յանպատրաստից չէր կրնար տաղեր յարադրել , կամ թէ ինչպէս կ'ըսուի՝ բերանը խօսք չունէր : Մի անգամ միայն իր կենաց մէջ դատի մը պաշտպանութիւն ըրաւ , առանց երկրորդելու : Միով բանիւ ոչ ոք պէտք է զարմանայ թէ վիրգիլիոս փաստաբանութեան ամենեւին յարմարութիւն չունէր իր նկարագրին , զոր Դոնատիոսի վիրգիլիոս վրայ ըրած նկարագրէն գրած է , որ Շագուորի միջոցով գրածին՝ զոր արդ լեցնի՝ իբրեւ ստոյգ հիմն եղած է , կարելի է գուցէ աւելի մեղմ բացատրուիլ ինչպէս որ իմաստն կը պահանջէ , զգուշանալով այն ամենայն բաներէն որ կրնան չափազանցութիւն ըլլալ : Վիրգիլիոս մեծ էր թէ մարմնով և թէ հասակով (բայց ես կը պատկերեմ զինքը փոքր մը նիհար և տկար ստամոքսին և կուրծքին տկարութեան պատճառաւ , թէպէտ ոչ ոք զայս կ'ըսէ) . 'ի մանկութեանէ և դաշտերու աշխատութեանց մէջ , երեսին գոյնը թխացելաւ և այրած տեսք մը ունեցող , չիւսական գծագրութիւն , սակաւ մի ծուլութիւն . միով բանիւ իր կերպին մէջ ինչ ինչ կը յայտնէին թէ դաշտերու մէջ մեծցած մէկն է : Եւ ժամանակի պէտք կար , որպէս զի այն կիրթ բարեբարոյութիւնն որ 'ի խորս իւր բնութեան ծածկուած էր , արտաբնական տեսնուէր :

Այն պատկերներն՝ որ զնա մեղի կը

ներկայացնեն՝ երկայն մազերով , կայտառ երեսով և ուղիղ կիսադիմաք , ծերունի Հոմերոսի վսեմ կերպարանքին նման հարազատ չեն , և կրնան ըլլալ հաւանորէն Օգոստոսի կամ Ապոլոնի պատկերքն :

Սենեկա առ Լուկիլիոս գրած նամակի մը մէջ , կը խօսի անոր մէկ բարեկամին , բարի և անկեղծ երիտասարդի մը վրայ , որ առաջին անգամու տեսնութեան մէջ իր մտաց և հոգեղոյն վրայ բարձր գաղափար տուած էր , բայց սակայն դաղափար մը միայն . վասն զի յանկարծակի եկած էր և կը ջանար իր երկնատութիւնը պարտելու . « և նոյն իսկ միտքն ամբողջով , հազիւ կրնար յաղթել իր ամբողջածութեանն . շատ մեծ պարծանք պատանւոյ մը համար . այնչափ ամբողջածութիւնն , կ'ըսէ Սենեկա , 'ի խորոց սրտին կու գար , և կը հաւատամ . թէ որչափ ալ հասակ առնու և վարժի , միշտ ամբողջածութեան հետքը պիտի պահէ » : Ինծի յայտարարեց ոմն կ'երևայ վիրգիլիոս , ունէր վաղահաս կարմրութիւն և դիմաց քաղցրախառնութիւն մը , այնպիսի բնիկ կարմրութիւն մ'էր որ բնական ամբողջածութեան յարատեւ ազդեցութենէ յառաջ կու գայ : Անոնցմէ էր դարձեալ , զոր Բուր , 'ի գեղեցկագոյն և զգալուն հոգիներէն մէկն , կ'ըսէ . « Իսկ ես այն դասուն կը վերաբերեմ որուն համար Սենեկա ըսած է՝ հովանեաց այնպէս բարեկամ են , որ կը համարին թէ լուսոյ մէջ եղողը մրկապատ ըլլան » :

Վիրգիլիոս այնչափ կը սիրէր ըզրիւս , որչափ գովուիլ չէր սիրեր , սակայն հեռուէն և ոչ երես առ երես կը սիրէր , կը զգուշանար թէատրոնի և Հոմարի փողոցներուն մէջ ընդունելէն . չէր սիրեր որ մատով ցուցուի և ոչ ըսուի թէ առ ինքն է : Կը սիրէր հանդիմանալով գեղեցիկ գործեր ընել որ լեցնեն համբաւով զտիեզերս և աշխուական զգացմանց տէր ժողովուրդ մը զարմանքով գրաւեն . բայց իր ուրախութիւնքն լուրթեան և հովանեաց տակ ընեն էին , և առանց դադարելու

անտուռաց և աղբերաց յաւերժհարսանց, ծածկեալ աստուածոց հետ կենակցելէն :

Այս ըսածներուս մէջ երևակայութիւն չկայ, այն ծանօթութիւնքն որ մեզի հասած են, զանոնք օգտութեամբ 'ի կիր կ'առնում. բայց լուսարանելով ինչպէս որ լաւագոյն կերպով պատշաճ կը գատիմ: Վիրգիլիոսի ներքին յատկութեանց վրայ խօսելով խաբուելու վտանգի մէջ ինկնալն դժուար է :

Ինչ որ արդ ըսի թէ Վիրգիլիոս աւթիղածութեան ձրիք զարդարուած էր, անդէպ պիտի չըլլայ կարգել 'ի հակառակէն ինչ որ ոմանք կը պատմեն Վիրգիլիոսի ունայնասիրութեան նկատմամբ. « Գովելի եղաւ իր ընդհանուր իրենաց մէջ, կ'ըսէ Սերվիոս. միայն ծածուկ պակտութիւն մ'ունէր և տկարութիւն մը, որ չէր կրնար թոյլ յօժարութեանցն դէմ դնել »: Այս բանս նոյն իսկ միայն իր երգերէն կարելի է հետեցնել:

տեցնել, իրաւ համարելով հանդերձ Վիրգիլեայ վրայ կասկած տուող պատմութիւնքն զորնախնի կենսագիրք կամ գրադէտք մեզի հասուցած են, և որ իր բարուց նկատմամբ հետաքրքրական են, կը նշմարին դարձեալ 'ի նոսա ինչ ինչ որ կը համապատասխանէ այն գաղափարին զոր ունինք Վիրգիլիոսի վրայ, և որ կ'որոշէ զինքն յայսմ իր Ուրտոիոս բարեկամէն, և է չափաւորութիւն մը մինչև վառվառն ըղձից մէջ: Ժանրաբարդութեան կերպարանք մը, և խոհականութիւն և զգօնամտութիւն խանդաղատանաց մէջ:

Արդ այս ժանրաբարդութիւնս, այս ազնուական և գորովայից շրջահայեցութիւնս, այս վեհանձնութիւնս նաև տկարութեանց մէջ Վիրգիլիոսի բուն բնութիւնը կը կազմեն. և զայստիկ պէտք չէ մոռնալ իր վրայ խօսելու ժամանակ:

Կը շարունակուի:

Աշխարհիս երկայնագոյն ստորերկրեայ ձաւքան. — Սընի լեռան ստորերկրեայ ճամբան ունի 12,233 մէդր երկայնութիւն. քանի մը տարիէն պիտի լըննայ քան զայն երկայն ստորերկրեայ ճամբան Էդոգարտ լեռան՝ 14,920 մէդր երկայն: Բայց մինչդեռ այս վերջինս դեռ փորուելու վրայ է, անցեալ տարի սեպտեմբերի 5ին բացուեցաւ ալ աւելի երկայն ստորերկրեայ ճամբան Յովսէփ Բ. ըսուած, Շէմիից քաղաքին մօտ, որ շատ նշանաւոր է հանրացն համար՝ Հունգարիոյ մէջ, և այս ստորերկրեայ ճամբան ունի 16,538 մէդր երկայնութիւն:

Բոլոր աշխարհիս մէջ քան զամենն երկայն այս ստորերկրեայ ճամբան է, զոր սկսեւ էին փորել յամիւն 1782, երբ իժթագաւորէր կայսրն Յովսէփ Բ. ուրուն անուամբը կը կոչուի. աշխատութիւնքն ինչուան մեր օրերը շարունակուեցան, բայց աւելի կամ ունալ փու-

թաջանութեամբ: Վերջի 5 տարինն ըլլաւ մէջ աւելի եռանդով յառաջ մղուեցան աշխատութիւնները, այնպէս որ անոր լրումը զարմանք բերաւ. և փառաւոր հանդէսներով կատարեցին անոր բացումը, վասն զի շատ օգտակար գործ մ'էր Հունգարիոյ այն մետաղաբեր դաւառին համար: Յաջորդութեան պատիւը կը տրուի իտալական մեքենայից, որոնք նախ բացին Սընի լեռան ստորերկրեայ ճամբան, ետքն Ամերիկոյ մէջ 'ի Նէվադա ուրիշ ստորերկրեայ ճամբայ մը՝ 6147 մէդր երկայն. հիմայ ալ կը գործեն 'ի Կոդգարտ: Հաշիւ կ'ընեն որ եթէ այն մեքենաներն 'ի սկզբան գործածուած ըլլային, Շէմիիցի ստորերկրեայ ճամբան կը բացուէր 27 տարուան մէջ, մինչդեռ գրեթէ դար մը տևել է: Իսկ բոլորական ծախքն եղեր է 4,599,000 ֆիորին, որ է ըսել 11 1/2 միլիոն ֆլանք: